



**«ՂԱՆԱՍՈՆԱ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՍՈՑԻԱԼ-ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ՀՀ, ք. Երևան 0064, Առնո Բաբաջանյան փողոց, 24շ., բն.13, հեռ. (37410) 72-08-03,
(37494) 568-333 ; e-mail: ghazaryanr@yahoo.com; ghazaryanr@mail.ru

N DS -04 - 2014

Հայաստանի Հանրապետության

13 .05.2014թ.

Ազգային Ժողովի Նախագահ Գալուստ Սահակյանին,
Վարչապետ Հովիկ Աբրահամյանին,
Բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանին

Ի հավելումն՝

ՀՀ Նախագահին, ՀՀ ԱԺ Նախագահին և ՀՀ վարչապետին հղված մեր 27.03.14թ.

թիվ N DS -03 - 2014 Տեղեկատվություն ստանալու մեր հարցում-նամակի /պատճենը կցվում է/

Մեծարգո պարոնայք,

Կից ուղարկում եմ վերը նշված մեր Հարցմանն ի պատասխան մեր ստացած գրությունների պատճենները, որպեսզի ինքներդ տեղեկանաք, թե ՀՀ օրենքով 5 օրյա ժամկետում տրվելիք պատասխանի փոխարեն որքան ժամանակում է Հարցումն ուղարկողը ստանում պատասխան, և հատկապես, թե՛ ի՞նչ պատասխան է ստանում Հանրապետության ամենաբարձր ինստանցիաներին հղված նամակին:

Նախ, հայցելով Ձեր ներողամտությունը , կցանկանայի ոչ-ավելորդ անգամ նշել, որ եթե նամակը հղվում է կոնկրետ պաշտոնատար անձի, ապա նամակագիրը միանշանակ նպատակ ունի ստանալ պատասխան հենց ՀԱՍՅԵԱՏԻՐՈՋից, եվ ոչ թե մեկ այլ մարմնի աշխատակցից, որի պատասխանից ես ինքս կամաչեի, եթե նման պատասխան որևէ մեկը գրեր և ստորագրեր իմ անունից:

Որովհետև, օրինակ ՀՀ վարչապետին հղված նամակի պատասխանից հասկացվում է, որ պատասխանը գրողը և ստորագրողը չեն էլ հասկացել, թե ինչ է գրված իրենց ձեռքն ընկած նամակում, և հենց միայն պատասխան տված լինելու համար, ԱՆԱՄՈԹԱԲԱՐ, վերցրել՝ պատճենահանել են մեկ այլ խնդրով, մեկ այլ հասարակական կազմակերպությանը /քաղաքացու/ նույն իրենց կողմից 02.04.14թ. գրված պատասխանը, և նոր ամսաթվով՝ 10.04.14թ., նույնությամբ ուղարկել են մեզ: /Երկու գրությունների՝ 5/12.1/50833 և 5/12.1/50921 պատճեններն էլ կցվում են/

Ցավը նրանումն է, որ պատասխանողները ոչ միայն չեն հասկանում, թե ինչին են պատասխանում, այլև՝ չեն էլ ցանկանում հասկանալ: Վախենամ, կգա մի օր, երբ կուզենան հասկանալ (երբ ուղտն իրենց անձնական դռանն էլ չոքած կլինի), բայց, ավաղ, ուշ կլինի:

2-րդ .- Մեր 27.03.14թ. գրության վերջին պատասխանն ստացել ենք այս մայիսի 10-ին /պատճենը կցվում է/, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ե. Կիրակոսյանից /ՀՀ Նախագահի և ԱԺ Նախագահի անունից/, որով գոնե տեղեկացվում է, թե ով կարող է մեզ տրամադրել մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Կցելով վերջին նամակը, խնդրում ենք մեկ անգամ ևս անդրադարձնալով մեր կողմից բարձրացված խնդրին, ՀՀ Սահմանադրության 27, 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, ի վերջո հայտնել մեզ, թե.

1/ Օրհուսի Կոնվենցիան, որին Հայաստանը միացել է դեռ 2001-ից, ինչպես նաև՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 26.12.2000թ. թիվ ՄԴՌ-269 որոշումը, կոնկրետ ո՞ւմ, կամ մեր պետության ո՞ր պետական մարմնին, և ի՞նչ նկատի ունեն.

ա/ «Կոնվենցիայի Կողմ կամ Հայաստան»,

բ/ Կողմը /**Հայաստանը/ ստանձնել է** պարտավորություն՝ որոշումների կայացման գործընթացին՝ ամենավաղ փուլերից սկսած, մասնակից դարձնել ազդակիր հանրությանը, և

գ/ **ապահովել** «անկախ և անաչառ մարմնի միջոցով Կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը, -ասելով:

Ըստ այդ Կոնվենցիայի, և Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեի 2004, 2006, 2008, 2011 թվականների որոշումների ու դրանց Հանձնարարականների.

- **Հայաստանն այսօր պարտավոր է ապահովել** Օրհուսի կոնվենցիայի դրույթների խախտմամբ իրենց **իրավունքները ոտնահարված անձանց** /տվյալ դեպքում՝ Դավայի այգիների հողօգտագործողների, որոնցից ոչ մեկի կարծիքը չի հարցվել չարաբաստիկ 2003-2004թթ. 1941-Ա/սօրինական որոշման ընդունման ժամանակ, էլ ուր մնաց, որ մասնակից դարձվեր՝ այդ և առ այսօր դրան հաջորդող որոշումների ընդունման ողջ գործընթացին, ամենավաղ փուլերից սկսած/ **իրավունքների՝ առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերականգնումը:**

Ցավոք, առ **այսօր ոչ մի պետական մարմին իր վրա չի վերցրել ՀԱՅԱՍՏԱՆԻ այս ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ**, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական և Սոցիալական հարցերով Կոմիտեի 2004, 2006, 2008 որոշումների ու դրանց Հանձնարարականների. կատարումը:

Ուստի, խնդրում ենք մեզ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ նաև.

2. կոնկրետ ՀՀ ո՞ր պետական մարմնին է վերապահված.

ա/ Կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների, առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների, վերականգնման համար **համապատասխան ՀԱՄԱԿԱՐԳԻ** ստեղծումը, եւ.

բ/ Ե՞րբ պետք է այդ ՀԱՄԱԿԱՐԳԸ սկսի զբաղվել Դավայի այգիների հողօգտագործողների խախտված իրավունքների՝ առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների, վերականգնման հարցերով:

Սույն հարցմանը կցում եմ նաև դեռևս 2009թվականին այն ժամանակվա ՀՀ բնապահպանության նախարարի կողմից ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական, սոցիալական հարցերով Հանձնաժողովին ուղարկած գրության պատճենը, որով հասցեատիրոջը տեղեկացվում է, որ. - ի կատարումն նշված Հանձնաժողովի 2008թ. III/Ե Որոշման Հանձնարարականների՝ Հայաստանը ձեռնարկել է կոնկրետ օրենսդրական միջոցներ Կոնվենցիայի բոլոր երեք, այդ թվում՝ արդարադատության մատչելիության, բաղադրիչների իրագործումը իրավական հիմքի վրա դնելու ուղղությամբ: Ուստի, խնդրում ենք տեղեկացնել նաև, թե կոնկրետ ի՞նչ է արված՝ ի պաշտպանություն Դավայի այգիների հողօգտագործողների շահերի:

Կանխավ շնորհակալությամբ և հարգանքով՝

Ռուզաննա Ղազարյան «Դավա-Սոնա» Հիմնադրամի ՀԽ Նախագահ



«ԴԱՄԱ-ՍՈՆԱ» ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՍՈՑԻԱԼ-ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, ք. Երևան 0064, Առնո Բաբաջանյան փողոց, 24շ., բն.13, հեռ. (37410) 72-08-03,
(37494) 568-333 ; e-mail: ghazaryanr@yahoo.com; ghazaryanr@mail.ru

N DS -03 - 2014

27 Մարտի 2014թ.

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Սերժ Սարգսյանին,

Ազգային Ժողովի Նախագահ Հովիկ Աբրահամյանին,

Վարչապետ Տիգրան Սարգսյանին

Ի լրումն՝

անցած տարիների ընթացքում Սույն գրության բոլոր հասցեատերերին մեր կողմից ուղարկված, բայց անպատասխան մնացած մեր բազմաթիվ գրավոր դիմում-հարցումների, և հատկապես, ՀՀ Նախագահին 17.10.13թ. պատվիրված նամակով /պատճենը կցվում է/ ուղարկված Տեղեկատվություն ստանալու մեր հարցում-նամակի.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ստանալու Դիմում-Հարցում

Մեծարգո պարոնայք,

Եթե Ձեզ համար մինևույն է, թե ինչ կարծիք կկազմեն Հայաստանի /ՀՀ իշխանությունների/ մասին միջազգային կազմակերպությունները, ապա կարող եք հանգիստ շարունակել Մեր նամակ-հարցում-դիմումների Չպատասխանելու ձեր քաղաքականությունը:

Բայց,

Եթե որոշեք դադարեցնել այն, եվ, ի վերջո ուզենաք պատասխանել, ապա.

Խնդրում ենք՝ ՀՀ Սահմանադրության 27, 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն մեզ տեղեկացնել, թե.

1/ Օրհուսի Կոնվենցիան, որին Հայաստանը միացել է դեռ 2001-ից, ինչպես նաև՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 26.12.2000թ. թիվ ՍԴՈ-269 որոշումը, կոնկրետ ո՞ւմ, կամ մեր պետության ո՞ր պետական մարմնին, և ի՞նչ նկատի ունի՝

ա/ “Կոնվենցիայի Կողմ կամ Հայաստան”,

բ/ Կողմը /**Հայաստանը/ ստանձնել է** պարտավորություն՝ որոշումների կայացման գործընթացին՝ ամենավաղ փուլերից սկսած, մասնակից դարձնել ազդակիր հանրությանը, և

գ/ **ապահովել** “անկախ և անաչառ մարմնի միջոցով Կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը, -ասելով:

Ըստ այդ Կոնվենցիայի, և Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեի 2004, 2006, 2008, 2011 թվականների որոշումների ու դրանց Հանձնարարականների.

- **Հայաստանն այսօր պարտավոր է ապահովել** Օրհուսի կոնվենցիայի դրույթների խախտմամբ իրենց իրավունքները ոտնահարված անձանց /տվյալ դեպքում՝ Դավթայի այգիների հողօգտագործողների, որոնցից ոչ մեկի կարծիքը չի հարցվել չարաբաստիկ 2003-2004թթ. 1941-Ա/նօրինական որոշման ընդունման ժամանակ, էլ ուր մնաց, որ մասնակից դարձվեր՝ այդ և առ այսօր դրան հաջորդող որոշումների ընդունման ողջ գործընթացին, ամենավաղ փուլերից սկսած/ **իրավունքների՝ առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերականգնումը:**

Ցավոք, առ այսօր ոչ մի պետական մարմին իր վրա չի վերցնում ՀԱՅԱՍՏԱՆԻ այս ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական և Սոցիալական հարցերով Կոմիտեի 2004, 2006, 2008 որոշումների ու դրանց Հանձնարարականների. կատարումը:

Ուստի, խնդրում ենք մեզ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ նաև.

2. Կոնկրետ ՀՀ ո՞ր պետական մարմինն է վերապահված.

ա/ Կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների, առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների, վերականգնման համար համապատասխան ՀԱՄԱԿԱՐԳԻ ստեղծումը, եւ.

բ/ Ե՞րբ պետք է այդ ՀԱՄԱԿԱՐԳԸ սկսի զբաղվել Դավայի այգիների հողօգտագործողների խախտված իրավունքների՝ առանց ֆինանսական կամ այլ խոչընդոտների, վերականգնման հարցերով:

Միաժամանակ, ի գիտություն Ձեզ, կից ուղարկում ենք Մեր էլեկտրոնային նամակը /պատճենը/, ուղղված Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեին, որով վերջինիս տեղեկացրել ենք, որ Հայաստանը առ այսօր չի կատարել իր պարտավորությունները և Կոմիտեի 2004, 2006, 2008թ.թ. Հանձնարարականները:

Հայաստանի կողմից Կոնվենցիայով 2001 թվականից ստանձնած պարտավորությունների բացարձակապես Չ'կատարման մասին այն ամենը, ինչը մենք ներկայացրել ենք Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեին, հաստատել է նաև Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպությունը /իր և էլի մի քանի այլ ՀԿ-ների անունից/ նույն Կոմիտեին ուղղված իր էլեկտրոնային գրությամբ /պատճենը կցվում է/:

Քանի որ՝ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է 5-օրյա ժամկետում, խնդրում ենք սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Տեղեկատվությունը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել այս հարցումը:

Կանխավ շնորհակալությամբ և հարգանքով՝

Ռուզաննա Ղազարյան

“Դավա-Սոնա” Հիմնադրամի ՀԽ Նախագահ



«ԴԱԼՍԱ-ՍՈՆԱ» ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՍՈՑԻԱԼ-ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, ք.Երևան 0064, Առնո Բարաջանյան փ., 24շ., բն.13; հեռ.(37410) 72-08-03,(37494)568-333;

e-mail: ghazaryanr@yahoo.com; ghazaryanr@mail.ru

N DS-2013-15
Նախագահ

Հայաստանի Հանրապետության

17 հոկտեմբերի 2013թ.
Մարզայանին

Պարոն Սերժ

Մեծարգո Նախագահ,

Սույն դիմումին կից Ձեզ ենք ուղարկում Օրհուսի Համապատասխանության Կոմիտեին, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովին ուղղված մեր գրությունների պատճենները, միաժամանակ խնդրելով Ձեր միջամտությունը, որպեսզի ՀՀ համապատասխան կառույցներն օժանդակեն Դալմայի այգիների նախկին հողօգտագործողներին, Օրհուսի Կողմ Երկրների 3-րդ Հանդիպման 2008թ Ապրիլի 4-ի թիվ *III/6b Որոշման 8-րդ կետի (c) ենթակետի Հայաստանին տրված Հանձնարարականի համաձայն, Հայաստանում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն՝ կապված Օրհուսի Կոնվենցիայի խախտումներով իրենցից ապօրինաբար ետ վերցված հողատարածքների համար համարժեք, արդարացի փոխհատուցում ստանալու հարցում:*

Հուսով ենք՝ Հայաստանին տրված Հանձնարարականների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը Ձեզ կտրամադրի Օրհուսի կոնվենցիայի Ազգային Համակարգողը՝ համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի փոխօգնության և մյուս սկզբունքների:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝

Ռուզաննա Ղազարյան
“Դալմա-Սոնա” Հիմնադրամի ՀԽ Նախագահ

